

3174

28
F-57

1885

XVI, 7.

200
221 - ft

2
o



B 2001

2010

1213

~~200
218-25~~

I

28
P-57

ԲԵՐՍԻՒԹ

200

221-PG

ԿԵՍԱՐ ԵՒ ԱՄՏՈՒԱԾ

(Բ. Ա. Բ. Զ.)

1004
19089



ԱՐԳԱՎ. ՖՐԱՆՏՈՒԵԼԻՆԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ



ԹԻՖԼԻԶ

1885 ՅՈՒՆԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵՅՆ ՓՈՂԱՑ, № 11 2

1885

ԱՐԴԱՐԱ
ՀԱՅՈՒԹ

Հ Օ Գ Ա Դ

Перепечатано изъ газеты „Ардаганъ“

Մ Օ Ր Ս Յ Ի Հ Ա Տ Ա Կ Ի Ն

Նուիրում եմ

Տեր բարոյական-կրօնական դաստիարակութեան
փախագով թարգմանուած այս գրքոյիների
շարքը:

29708. և. 1.

13546. 88

Дозв. цензурою. Тифлисъ, 18 Сентября 1885 г.
Типог. И. Мартirosianца, на Орб. ул., д. № 1/2.

Ն Ե Խ Ա Ր Ջ Ա Խ Ա Ր

Ա Մ Ա Յ Ա Յ Ի Գ Ե - Ա Յ Ա Յ Ի Գ Ե - Ա Յ Ա Յ Ի Գ Ե
Հ Ա Յ Ա Յ Ի Գ Ե - Ա Յ Ա Յ Ի Գ Ե - Ա Յ Ա Յ Ի Գ Ե

Պ Ա Յ Ա Յ Ի Գ Ե

Վատահանում եմ ասել, որ Բերսիէն իբրև
բարոյագէտ հաւասար է եկեղեցական բեմի ա-
մենահռչակաւոր զարդերին, իսկ իւր նուրբ և
ճշգրիտ դիտողութեամբ ոչ ոքից վայր չէ...: Ար-
գեօք ինչպիսի ատենախօս է նա: Ունի ձևեր,
առանձին մի ոճ, ճարտասանական կորով: Ինձ
թվում է թէ ունի, թէպէտ չդիտեմ: Բայց որ
նա սքանչելի մատենագիր է, առանց կեղծ
եռանդի, առանց արուեստակութեան, որ պար-
զութիւն և գեղեցիկ ճաշակ ունի, որ նորա ոճը
իւր մտքի հաւատարիմ և ստորդ արտայալու-
թիւնն է և իւր հոգւոյ անխարռութիկ հայելին,
— այդ ես գիտեմ, այդ ես համարձակ հաստա-
տում եմ: Հազիւ թէ մի որ և է զրքի ընթեր-
ցանութիւն ինձ այնքան զմայանք պատճա-
ռած լինի, որքան Բերսիէի քարոզները:

Ա Յ Ա Յ Ի Գ Ե Դ Ա Յ Ա Յ Ի Գ Ե

ազգ մեջով կո գրաս նև նամանաս ի
ու մինչ մատացմքի մ պատրաստ ու ճարպաց
և պատ դիմ թոյ մայդրաց պատահած ունին
ով և մատ ըլլոյ չո վաստ է արութի ամբար
պատ դիմ թոյ և առանձնաս մատահած գոմք
չուն ։ Յայտ մատահանաւուն և ան մի մայնաւուն
կո ըլլոյ նամայք ու ճարմի միտ է ի ։ Ե կամ ի
ճրդի ըլլուն և պատահած մատահած ուն
դայր կո առանձնաւուն ըլլուն ճրժուն
զն այս կո միտ մաշուն թիգրաք և մայնի ուր
- ու առանձնաւուն ըլլուն և նիմաստամ մայն դիմ
մայնաւ ըլլուն արութի դիմ և մայնի
առանձնաւուն մայն նամայք ու ըլլուն
դիմի դիմ և ան մի է ի պատահ և նու
- անաւուն քայլաւուն պատահ նու մայնի ուր
: պատահաւուն մատահած ըլլոյ մայն ճուն

100 27 բանակ

մայնի դիմ ու նամայք ու ճուն ըլլոյ ի տակաւ
մայն կո պատ մայն և մայն մատահանաւուն
գոմք և պատահած մատահանաւուն ու նամ
այս պատահած կո պատահ ըլլոյ մատահանի և
մատ պատահած ու պատահ ըլլոյ մատահան մայ
յայտ մատահանաւուն ըլլոյ մատահան մայ
նամայք ուր ու պատահած ու պատահ ըլլոյ
մատահած ու պատահ ըլլոյ մատահան մայ
նամայք ուր ու պատահած ու պատահ ըլլոյ
**Առւել զկայսերն՝ կայսեր, և զԱս
տուծոյն՝ Աստուծոյ:**
(Մատթ. Խթ. 21.) Յ ըլլոյ
այս ու գայուղիուն խորց դուն բան ուր այս
Զ գիտեմ, Եղբարք իմ, Խելամուտ Էք Ե-
ղած արդեօք, թէ որքան վատանգաւոր Էք և
աղէտալից Յիսուսի զրութիւնը այն ըութին,
Երբ նա արտասանեց այս մեծ խօսքը: Արժէ
որ մենք մի փոքր կանգ առնենք դորա
վերայ:

Դուք գիտէք թէ որքան բորբոքեալ էր
ալդ միջոցին Խորակէլի քաղաքական մթնոլոր-
տը: Հրէաները չէին կարող ընդունել հոռվ-
մէական տիրապետութիւնը: Հակառակ Հերով-
գացոց կուսակցութեան վատասիրտ խոնար-
հութեան, որոնք Օգոստոսի և Տիբերոսի դրա-
նիկներն էին դարձած, ազգի ահագին մեծա-

մասնութիւնը միշտ երազում էր իւր նախկին անկախութեան մասին և ամէն ոք, որ կամենում էր ժողովրդականութիւն վայելել, պէտք է փայփայէր արդ լոյսերը, որ փարիսեցիք վառէին պահում ժողովրդի հոգւոյ մէջ իբրև մի նուիրական հուր: Ստիպել Յիսուսին լայտնել իւր կարծիքը այս խնդրի մասին,—մի վերին աստիճանի ճարպիկ միջոց էր նոցա համար, որոնք կամենում էին մի որ և է հնարքով կոտրել նորա անունը՝ ժողովրդի աչքում: Եւ ահա այս նենգ խորհրդով, հերովդացիք և փարիսեցիք մոռանում են իրանց վաղեմի ատելութիւնը և միանում են: Յանկարծակի, մի քանիսը նոցանից բաց հրապարակի վերայ, մերձենում են Քրիստոսին և ամբոխի առաջդնում են նորան այս ճարտարասույզ հարցը: «Պարտ է Հարկս տալ կայսեր՝ թէ ոչ»: Եւ կարծես թէ ամեն խուսափանք անկարելի անելու համար՝ աւելացնում են, ասում է մեզ Մարկոսը, «Տացուք՝ եթէ ոչ տացուք»:

Նկատեցէք թէ որ աստիճանի ծանը դըրութեան մէջ էր ձգուած Յիսուս: Եթէ նա պարզապէս պատասխանէ, «Վճարեցէք Հարկը», նա մի վատթար է, ազգային անկախութիւնը

ուրացող, դաւաճան դէպի Խօրայէլը: Եթէ նա պատասխանէ՝ «մի վճարէք Հարկը», սոյն այս մարդիկը ապստամբ կ'հաշակեն նորան և առաջուց նորա երեսին կ'տան այն մեղադրանքը, որ շուտով կրկնելու են Պիղատոսի առաջ դատարանում՝ «Հակառակ է կայսեր»: Այս մասն գիշէ է պատասխանում Յիսուս: Նա վերէ առնում մի գահեկան, որի վերայ գտնվում է կայսեր պատկերը և որ Նըեաների հպատակ դրութեան տկները նշանակն է, այնուհետև, նայելով իւր խօսակիցների դէմքին, հարցնում է թէ ում պատկերն է գրամի վերայ գըոշ մուած և ստոնալով նոցանից որոշ խոստովանութիւն այն քաղաքական կոխման, որ նոքա առաջինները ընդունեցին, նա արտասանում է այս անմահ խօսքը: «Ճուք զկայսերն՝ կոյսեր և զԱստուծոյն՝ Սստուծոյ»:

Այսպէս Յիսուս բացարձտկապէս մերժում է լուծել ազգային քաղաքականութեան վերաբերեալ մի խնդիր, ինչպէս մի այլ հանգամանքում, երկու եղբարց առաջ, որոնք վիճում էին ժառանգութեան մասին, նա մերժեց մի իրաւաբանական խնդիր վճռել: Այս կազի խնդիրներ լուծելու համար չէ եկած նա այս

աշխարհը: Զուր կանցնէ ամեն ջանք նորան
ուամկապետ, ժողովրդի լուզիչ դարձնելու: Սա-
կայն ենթագրեցէք մի լուպէ, որ նա հրատա-
րակէր Խորայէլի անկախութիւնը, և արտասա-
նէր մի խօսք, որ մի ահեղ ապստամբութեան
նշան պէտք է դառնար: Ինչ կ'շահէր ալդ
բանից Աստուծոյ արքայութիւնը: Արդեօք մի
արիւնայնդ պատերազմ՝ յաջորդելով միւս բազ-
մաթիւ կոփւներին՝ ինչ չափով կ'նպաստէր
արդարութեան դատին, և հաստատ է արդեօք
որ Խորայէլը արժանի էր ազատութեան: Երբ
մարդս ուսումնասիրում է այդ երկրի պատ-
մութեան այն լիսուն տարուայ շրջանը, որ
նախընթաց է Քրիստոսին, երբ տեսնում է՝
թէ նորա ցեղապետները ինչ մեծարանքներ են
մատուցանում Հռովմի զօրապետներին, թէ
ինչպէս նոքա իբրև զէնք են ծառայում կայ-
սերական քաղաքականութեան բոլոր գաղտ-
նագործ որոգալիթներին, թէ որքան անընդու-
նական են նոքա միանալու մի ընդհանուր և
բուռ հայրենասիրական նպատակի համար,—
այն ժամանակ կարելի է միայն հիանալ Յի-
սուս Քրիստոսի այն Աստուծալին իմաստու-
թեան վերայ, որով նա հրաժարվում է մաս-

նակցել հրէաների քաղաքական ցնորքների
անբաժան կուրին:

Պէտք է ասել, որ նորա հակառակորդնե-
րը զգացին այդ և չնոյելով իրանց ատելու-
թեան, նորա բռնած դիրքը զարմանք և հիա-
ցումն ներշնչեց նոցա: Տասն և ութ դար է
անցել և Քրիստոսի այդ խօսքը այժմ աւելի
ճշմարիտ է, աւելի լուսավիալ է, աւելի իրա-
տական է քան երբ և իցէ: Ոյս իսկ կուզէի
բացատրել ձեզ, խորհելով ձեզ հետ այդ խօս-
քի մասին:

Այս խօսքը միանգամայն նոր էր: Դա
վերջ էր գնում աստուածակետութիւն (théo-
cratie), որ մինչև այն ժամանակ Խորայէլի
քաղաքական իդէալն էր: Ի՞նչ բան էր աս-
տուածակետութիւնը, դա քաղաքային հասա-
րակութեան ստորադասութիւնն էր քահանա-
յական կարգին, Աստուած կառավարում է ան-
միջապէս իւր պատուիրակների ձեռքով և
պետութեան ձեռքում եղած բոլոր միջոցները
գործ է զնում իւր կամքը իրագործելու հա-
մար: Եղբարք իմ, աստուածակետութիւնը մի
վսեմ իդէալ է: մի վերին աստիճանի մեծ գա-
ղափար կայ մտքի այս տիրապետութեան մէջ

նիւթի վերալ, և ոգւոյ ձեկի վերալ: Ես յօժար
եմ ասելու որ Աստուծոյ թագաւորութիւնը
այնպէս, ինչպէս նա մի օր պէտք է իրագոր-
ծուի, Հանդիսանում է մեր աչքի առաջ բնա-
կանապէս իրեւ մի աստուծածպետութիւն, որ
ամեն ինչ կ'ձգտէ Տիրոջ ծառայութեան: Ես
Հիացած եմ այն բանի վերալ, ինչ որ Խորալէլի
կոչման մէջ անզուզական և Հերոսական է,
Խօրալէլի, որ չնայելով իւր թուական նուա-
զութեան, Համարում է իրան Աստուծոյ ի-
րաւունքի զինուոր. Մակարայեցւոց պատմու-
թիւնը անկասկած մարդկութեան պատմու-
թեան ամենամեծ էջերից մէկն է: Սովորական
մարդիկ չէին նոյնպէս Գրիգոր ՎԻՆերը և Խո-
կենտիոս ԱԽՆերը. նոքա, որոնք այդ անձանց
մէջ տեսնում են լոկ փառամոլ ֆանտիկոս-
ներ, այս կարծիքը յախտելով ցոյց են տալիս
իրանց սահմանափակութեան չափը: Երբ Հիւ-
դեբրանդը մեռնելու բոպէին կրկնում էր այս
հռչակաւոր խօսքերը. «Ես սիրել եմ արդարու-
թիւնը և ատել անարդարութիւնը. ահա այս
պատճառով եմ աքսորանքի մէջ մեռնում.» չէ
կարելի չը խոստովանել նորա մէջ մի հիանա-
լի ցնորքի անձնատուր եղած հոգւոյ խոր հա-

մողմունք: Բայց և անպէս ես նորից կրկնում
եմ, որ այն խօսքի մէջ, որ մենք ազժմ առ-
առամասիրում ենք, Յիսուս բացարձակապէս
դատապարտել է աստօտածպետութիւնը:

Այս խօսքը լայտ լանդիման երկու Հասա-
րակութիւն է ընդունում. մէկը գուտքազա-
քային, որի գլուխն կեսարն է և որ կարսղ է
Կոչութիւն կայսրութիւն, Թագաւորութիւն, սա-
կաւացետութիւն կամ ռամկապետութիւն, միւ-
սը բուն կրօնական, որ կախումն ունէ միայն
Աստուծածանից:

Սրգեօք այդ կ'նշանակէ թէ Յիսուս կա-
մենում էր ազատ կացուցանել քաղաքային
Համարակութիւնը ամէն կրօնական գաղափա-
րից և սահմանել մի տեսակ շրջան, որ փա-
կուած պէտք է մնալ Աստօտածոյ ազդեցութեան
առաջ: Այսպիսի մի ենթադրութիւն արդարեւ
անկեթեթ կ'լինէր, դա միանգամայն կ'հոկա-
ռակէր Աւետարանի ամբողջ վարդապետու-
թեանը: Աւետարանի ամենաակներև յատկա-
նիշներից մէկն այն է, որ նա չէ ճանաչում
աշխարհականի և հոգեսորականի մէջ եղած
հեթանոսական խտրութիւնը, կրօնը մի առան-
ձին տարը չէ դարձնում, մնացեալ տարրերից

կղզիացած. այլ ընդհակառակը տեսնում է կը-
րօնի մէջ աստուածալին ազդեցութիւն, որ ա-
մեն ինչ պէտք է թափանցէ. չկայ այնպիսի
մի շրջան, որ կարողանար փակուած մնալ
նորա առաջ: Ահա այս միտքն է յալտնում
սուրբ Պօղոսը հետևեալ խօսքերի մէջ, որոնք
մի օտարութի պարզութիւն ունին. «Եթէ ու-
տիցէք, եթէ ըմպիցէք, եթէ զինչ և գործի-
ցէք, զամենայն ինչ ի փառս Աստուծոյ արար-
ջիք:» Եթէ ուրեմն կեանքի ամենաչնչին գոր-
ծողութիւնները պէտք է վերաբերուին Աստու-
ծոյ փառաց, ապա ինչպէս կարելի է նորա
առաջ փակ պահել սօսիալական և քաղաքա-
կան կեանքի շրջանները. իսկական կրօնը եր-
բէք չի համաձայնիլ այդ շէմքի վերայ կանգ
առնել: Նա կ'ցանկայ անցնել այդ շէմքը: Նա
կ'մտնէ գերդաստանը, սենատները, դատարան-
ները. նա կ'ցանկայ ամեն ինչ գիտենալ և ա-
մեն ինչ թափանցել: Ոչ մի օրէնք օտար չի
մնալ նորա համար՝ նա յաւակնութիւն կ'ու-
նենայ ամենուրեք մտցնել արդարութեան, իս-
կական հաւասարութեան, գթութեան ոգին.
Նա փոքրերի և թուլերի իրաւանց վեհագոյն
ներկայացուցիչը կ'լինի. նա կ'պատառէ հասա-

րակութեան ընդունուած սովորութեանց կեղ-
ծաւոր քողը. նա կ'ձգտէ ըոլորը դէպի ճշմար-
տութեան ուղին դարձնել: Ինչպէս կարելի է
պահանջել քրիստոնեայ դատաւորից, օրէնս-
դրից, պետական անձից, թողնել իւր խղճ-
մասնքը այն դրան շէմքին, ուր նու խոր-
հուրդ է անում, և այդ որ սքանչելի սովիե-
տութեան հիման վերայ կարելի է պահանջել:
որ նա կրօնասէր լինելով իւր սեփհական
անձին վերաբերեալ ամեն գործերի մէջ, ան-
կրօն լինի երբ խնդիրը հասարակական մարմնի
մասին է, ալսինքն մարդկանց մասին, որ նո-
րա եղբայրներն են: Քաղաքային ընկերութիւ-
նը կ'ենթարկուի ուրեմն կրօնի ազդեցութեան
և կ'ենթարկուի այնքան աւելի, որքան այդ
կրօնը աւելի վեհիմաստ է և հասարակու-
թեան օրէնքները կ'կրեն բնականապէս այն
դրոշմը, որ կրօնը դրած կ'լինի ալդ հասար-
կութիւնը կազմող անդամների իւրաքանչիւրի
խղճմտանքի վերայ Տեսէք, օրինակ, թէ ինչ
է անցնում մեր աշքի առաջ Ափրիկէի երկու-
ծայրերում: Հարաւում, Լենուտոյի երկրի մէջ
մի փոքրեկ ազգ, որի անունը ընտանի է մեզ
ամէնքիս, մեծաւ մասամբ դարձրած է դէպի

քրիստոնէութիւն, երբէք մեր միսիօնարները
չեն ձգտել միջամտելու նոցա՝ քաղաքական
օրէնսդրութեան, բայց և այնպէս նոցա վար-
դապետութեան ազգեցութեան ներքոյ բազմա-
կնութիւնը զուտով կ'դադարէ օրինաւոր լինե-
լու և երկրի ներկայացուցիչները կ'չնորհեն
գերդաստանին իւր իսկական հիմքը և իւր
արժանաւորութիւնը: Եղիպտոսում ժամանա-
կակից գաղափարների ազդեցութեան ներքոյ,
որոնց աղբիւրը Աւետարանն է, սորկութիւնը
ուժգին հարուածների է ենթարկվում և կա-
րելի է համազուած լինել, որ չ'սայելով երկրի
ամպականուած կառափարութեան համախոր-
հուրդ լինելուն՝ նա կ'անհետանայ մեր աչքե-
րից: Նոյն վերջը կունենայ Հնդկաստանում դա-
սակարգերի (կաստաների) ատելի սիստեմը և
մենք կարող ենք յուսալ, որ մօտիկ է այն
օրը երբ Զինոստանը կ'ազատուի ափիոնի թույ-
նից: Նոյն իսկ այստեղ, մեր շուրջը, հակառակ
բնապաշտների (naturaliste) այն սորոցացնցիչ
տեսութեանց, որոնք ճանաչում են միայն ոյժի
իրաւունքը, կարծիքների մի աճող շարժում,
ձգտում է ապահովացնել կնոջ, ժողովրդի ե-
րեխայի, բոլոր կրտսեր կոչուածների համար

մի հովանաւորութիւն՝ նոցա բարոյական ա-
զատութիւնը և արժանաւորութիւնը պաշտ-
պանելու համար: Թող չ'շփոթէ մեր միտքը
այն փաստը, որ այս մեծ դատի պաշտպան
յաճախակի հանդիսանում են ազատախոհներ
(libre penseur) կամ անաստուածներ. այդ
դատը այսու ամենայնիւ սրբազան է և քրիս-
տոնէական, դա Յիսուսի այն մեծ սկզբունք-
ների երկրաւոր և հասարակական իրագործու-
թիւնն է, որ նա ցանել է այս աշխարհում:
**6804
1961**

Աւետարանը կամենում է ուրեմն և կա-
րող է ամեն ինչ թափանցել: Մարդկութեան
կեանքը իւր ամենատարբեր շրջաններում պէտք
է ենթարկուի նորա ազգեցութեան:

Այս ասելուց յետով, ես նորից հաստա-
տում եմ, որ կրօնական հասարակութիւնը և
քաղաքային հասարակութիւնը կատարելապէս
տարբեր են. այս զանազանութիւնը մեզ հա-
մար ակներև կ'լինի եթէ մենք ներկայացնենք
մեզ նոցա տիրապետութեան ենթարկուած
շրջանների և գործ դրած միջոցների բնաւո-
րութիւնը:

Պետութեան տիրապետութեան շրջանը՝
ներկայ կեանքն է և միայն և եթ աշխարհա-



կան շահերը: Պետութիւնը պէտք է երաշխաւորէ ամէն մի քաղաքացուն իւր իրաւունքների և արտօնութիւնների ազատ վայելումը. բացի այս նա կարող է նպատակ գնել իրան ապահովել ամէնքի համար բարելաւութեան մէ աւելի մեծ գումար. նորա բարձրագոյն իդեալը արդարութիւնն է: Այս կողմով նա հանդիպում է բարոյականութեան: Կայ մի հաստրակական բարոյականութիւն որ չպէտք է բռնաբարէ անհատի խղճմտանքը, բայց որ պէտք է պահանջէ ամէնքից հնագանդութիւն և, եթէ հարկը ստիպէ, նաև զոհաբերութիւն: Սիսալ է ուրեմն կարծել թէ հասարակութիւնը լոկ շահերով կապուած մի պարզ ընկերութիւն է: Նորա գտափարը շատ աւելի բարձր է, նա կարող է հրաւեր կարդալ մարդկութեան ամենամեծ բնագդումներին:

Բայց պետութիւնը հանդիպում է բարոյականութեան միայն իւր սօսիալական կիրարկութեան միջոցին. նա գիտէ և կարող է քաղաքացի նախապատրաստել. նա չէ կարող և չպէտք է իշխէ ամբողջապէս մարդու վերայ: Կրօնական խղճի սեամքի առաջ, նա պէտք է կանգ տռնէ. երբ զանազան վարդապետու-

թեանց է հանդիպում նա կարող է և պէտք է միայն նոցա բերած պտուղներով գատէ. բարոյականութեան մէջ նորան հարկ չէ գիտենալ իրերի ծագման և վախճանի խնդիրները: Եթէ հնագանդուելով պարագիս, ես հընագանդում եմ Աստուծոյ ձայնին, եթէ ես հաւատում եմ որ վարմունքս Աստուածալին համութեան արժանի է,—այդ պետութեան գիտենալու բանը չէ: Ի հարկէ պետութիւնը չէ կարող անտարբեր մնալ դէպի կրօնի այն ուսումը, որ զանազան եկեղեցիք մատակարարում են աճող սերնդին: Եթէ այդ ուսումը բայց արձակապէս յարձակուի պետական օրէնքների վերայ, եթէ նա քարոզէ իշխանութեան արհամարանք կամ սօսիալական առելութիւն, եթէ յարձակուի քաղաքալին բարոյականութեան նոյն իսկ սկզբանքների վերայ, տէրութիւնը իրաւունք կ'ունենայ միջամտելու. բայց երբ այդ ուսումը խօսում է Աստուծոյ, մարդկային հոգւոյ և մարդու վերայ ազգող կրօնական շարժառիթների մասին, ապագայ կեանքի յուսոյ մասին, պետութիւնը պէտք է խոստովանէ որ ինքը անձեռնհաս է նոյն իսկ այն բաների առաջ, որ իւր աչքում կարող է ան-

մտութիւն, նախապաշարմունք երևալ: Եղել
են ասողներ, որ ժամանակակից պետութիւնը
անաստուած է. դա մի սովինստական դադա-
փար է, որով կամենում են պետութիւնը մի
աղանդի գրօշակին ծառալեցնել: Այսքանը
կարելի է սաել միայն, որ պետութիւնը չէ-
զօք դիրք պէտք է բռնէ զանազան դաւանու-
թիւնների հանդէպ և նորա ամենաբարձր կո-
չումն է՝ պաշտպան հանդիսանալ խզճի աղա-
տութեան և ամենքի կրօնական իրուունքների:
Ամեն անգամ երբ պետութիւնը գուրս է եկել
իւր այս իրաւանց շրջանից, վարդապետու-
թեան խնդիրների մէջ խառնուելով, մի մաս-
նաւոր աստուածաբանութեան պաշտպան հան-
դիսանալու, նա բռնութեամբ սեփհականել է
երան մի ծիծաղելի և ատելի դեր:

Յիշեցէք Բիւզանդիօնի կրօնական կոիւ-
ները, ուր օրտօգքսութեան պաշտօնական
ճակատագիրը շատ անգամ կախուած էր մի
կնոջ հաճուքից. յիշեցէք Սպանիալի Փիլիպոսի
մուալլ բռնակալութիւնը կամ տասնեութե-
րորդ դարու անվախճան վէճերը, երբ Հռովմէի
վարդապետութիւնը շնորհքի մասին տարած-
փում էր այն ամպարիշտների, անբարոյական-

ների կեղեքիչ ոստիկանութեան ձեռքով, որոնք
կոչում էին Ռէժան և կարգինալ Դիւլուա:
Թող ափսոսալ ալդպիսի ժամանակները ով
կամենալ: Ես իմ կողմից ասում եմ, թէ ամե-
նայն միջոց, որ բառնումէ պետութիւնից
խզճի սրբազն շրջանը, նպաստում է Յիսուս
Քրիստոսի բուն ձիտքը իրագործելուն:

Եկեղեցին և պետութիւնը զանազան-
փում են ոչ միայն իրանց ներգործութեան
շրջաններով, այլ և իրանց գործ դրած մի-
ջոցների բնաւորութեամբ: Պետութեան գէնքը
—ո յժն է, նո իշխանութիւն և իրաւունք
ունի բռնադատել նիւթական ստիպմամբ ամե-
նայն ընդդիմակացութիւն իւր օրինաց: Եկեղե-
ցւոյ գէնքը խօսքն է. Եկեղեցին չէ կարող
և չպէտքէ բռնադատէ որ և է հաւատք
ընդունելու. «Զի գէն զինուարութեան մերոյ ոչ
է մարմնաւոր (Չ կորնթ. X, 4), սաել է հոգի-
ների այն մեծ աշխարհակալը, որ երբ և իցէ
յայտնի է եղել Եկեղեցուն: Տեսականապէս ա-
մէնքը ընդունում են այս տարբերութիւնը:
Քրիստոնէութեան և ոչ մի ջատագով չ'կայ,
որ իբրև մարդկանց հիացման առարկայ չ'ներ-
կայացնէր առաքեալների վեհ պատկերը, ո-

ըոնք յաղթում են աշխարհը միմիալն համոզման զօրութեամբ և սրբութեան օրինակով. չկայ մէկը, որ չը շեշտէր կամովին խաչուած Յիսուսի և Ղուրանը սուսերով տարածող Մահամեդի հակապատկերը: Բայց իրականապէս և եթէ փաստերին նայելու լինինք, եկեղեցին ամենանախառածելի կերպով եղծել է այս հրաշալի սկզբունքները: Տասն և վեցերորդ դարու բողոքականութիւնը շատ երկիրներում մուծուած է և տարածուած բոնակալական միջոցներով, իսկ կաթոլիքական եկեղեցին երբէք պաշտօնական կերպով չէ մերժել բոնադատութեան օրինաւորութիւնը կրօնական խնդիրներում, ընդհակառակը syllabus'ը *) հռչակել է այդ սկզբունքը մի այնպիսի անկեղծութեամբ, որ ոչինչ աեղիք չէ թողնում թիւրիմացութեան: Ինձ քաջ յայտնի է այն կարի նուրբ խտրութիւնը, որ պաշտօնական աստուածաբանութիւնը միշտ արած է այդ

*) Քարոզիչը ակնարկում է այսուեղ պապի 1864 թուականին հրատարակած շրջաբերականին, որի մէջ ամփոփուած են Հռովմայ աթոռից նրոված բոլոր հին և նոր ուսմունքները:

տեսակ խնդիրների մէջ: Ասում են որ եկեղեցին միշտ անոխակալ է և քաղցր, որ նա միայն հոմոզմունք է գործ դնում, որ նա մայր է և գթառատ, բայց աւելացնում են թէ երբ նորա ջանքերը ապարդիւն լինին, նու անհաւատներին և անապաշխարներին յանձնում է մարմնաւոր իշխանութեան: Ecclesia abhorret a sanguiine, եկեղեցին գարշում է արիւնից, ուստի և այդ արիւնը նա թափել է տալիս աշխարհային պաշտօնեայի ձեռքով: Զ'գիտեմ թէ դուք ինչ կարծիք ունիք այս սովիեստութեան մասին: Ինձ համար դա գարշելի է: Ես նախադասում եմ քահանայի բազուկը, որ հարուածում է յայտնապէս՝ այդ կեղծաւոր հռմաբանութեան: Երբ մարդ կարդում է հերետիկոսների դատավճիռների քանի մի արձանագրութիւններ, երբեմն հանդիպում է մի մանրամասնութեան, որ սարսուռ է ըերում մեզ վերալ: Ահա կանգնած է ամբաստանեալը՝ խոշտանգանքից ուժահատ, նորա մարմնի անդամները ջարդուած են, նորա գէմքը սաստիկ նեղութիւնից կապտած, նորա ատամները կըրծտում են երբ նա պատկերացնում է իրան սպասող նորանոր տանջանքները, — այն ժամանակ,

ասում է պատմութիւնը, «Հայր Հաւատաքննողը սկսեց քաղցրութեամբ խօսել նորա հետ». tunc pater suaviter allocutus est. Այս քաղցրութեամբ խօսքը գրագրի պարզ գրչի տակից սպրդած մի ճշմարիտ դժոխալին իմաստունի: Ես երբէք բաւականին խիստ խօսքեր չեմ գտնիլ այն չարիքը արտայալտելու համար, որ արել է եկեղեցին ալսպիսի զէնքեր գործ դնելով: Ինձ կ'պատասխանեն որ այս միջոցները յաջողութիւն են ունեցել: Ստիպուած եմ խոստովանել, որ այդ միանգամայն ճշմարիտ է: Նատ ազնիւ հոգիների ցնարքներին հակառակ՝ փաստը իրականութիւն ունի: Այս զէնքերը յաղթել են: Ճիշտ չէ որ մարտիրոսների արիւնը միշտ եկեղեցւոյ սերմն է եղած: Այս արիւնը շատ անզամ իզուր է հոսել: Ուժը երբեմն յաղթող է հանդիսացել խղճմտանքների վերայ. երկիրներ կան, որոնց գլխին մի ուժգին և կոպիտ յաղթութիւն մի ալնպիսի կըօն է կապել, որ ազգային է դարձել և դարեր ապրել: Ես գիտեմ ի հարկէ, որ եթէ իրերի ընդհանրութիւնը նկատողութեան առնենք, կ'ստուգենք որ այս յաջողութիւնները թանգ գնով են ձեռք բերուած, որ նոքա զարհու-

րելի ընդդիմագործութիւններ են առաջ բերել, որ սուրբ Բարդուղիմէոսի գիշերը, ինչպէս նկատել է Բէկօնը, աւելի անաստուածներ է ստեղծել քան Լուկրեցիոսի բոլոր գրուածքները, և որ վերջ ի վերջով քրիստոնէութեան ընթացքը երկար ժամանակներով դադարեցրած է եղել այս կարծեցեալ յաղթանակներով: Բայց այս բոլորը պարզուեցաւ միայն ժամանակի ընթացքում. արդ քաղաքագէտները կամենում են յաջողութիւն ունենալ, և, պէտք է խոստովանել, որ անմիջական յաջողութիւնը շատ յաճախ պսակել է հալածանքը: Ահա այս պատճառով, եթէ կամենում էք այդ տեսակ զէնքեր գործածելու կամ դոցա համակրելու գալթակղութիւնից ազատ մնալ, պէտք է փաստերից բարձր ամբառնաք և հիմնուիք մի սկզբունքի վերայ: Արդ՝ այդ սկզբունքը նոյնն է, որ դրել է Յիսուս Քրիստոս և որին այնպէս ակներև կերպով հետեւում էին առաքեալները. այսինքն Աստուծոյ արքայութեան և սորա գործ դրած զէնքերի բուն հոգեոր բնաւորութիւնը: Դարձեալ կրկնում ենք, պետութիւնը այս դէպքում մի դեր ունի միայն և այլ դեր ունենալ չէ կարող, բայց թէ՝ ա-

պահովել ամէնքին խղճի ազատութիւնը, ապահովել ոյժի զօրութեամբ, եթէ այդ անհրաժեշտ է.—այդ նորա իրաւունքն է և նորա պարտաւորութիւնը։ Եկեղեցին կարող է այս պահանջել պետութիւնից։ մենք կ'մեղանչէինք մեր պարտաւորութեան դէմ իբրև քրիստոնեալ և քաղաքացի, եթէ թոյլ տալինք, որ այս իրաւունքը ոտնակոխ լինէր. բայց երբ այս ընդհանուր իրաւունքը հաստատուած է, եկեղեցին կարող է սփռել ճշմարտութիւնը, որի աւանդապահն է ինքը, միմիայն վարդապետութեան և համոզման ճանապարհով։ Իւր գործ դրած սուսերը—Աստուծոյ բանն է. խաչը, որ իւր Գլխոյ չարչարանքի գործիքն էր, դառնում է իւր յաղթութեան գործիքը. նորան ոգեսրող միտքը նմանեցրած է աղաւնիի. սոքա են այն պատկերները, որ գործ է ածում սուրբ Գիրքը իւր զօրութիւնը ցոյց տալու համար։ Եթէ ճշմարտութիւնը մի որ և է աստիճանով պարտական լինէր իւր յաղթութիւնը ոյժին, այն ժամանակ մենք պէտք է հարցանէինք մեզ, թէ ինչու Աստուծած թոյլ տուեց որ ճշմարտութիւնը խաչուէր իւր Որդւոյ անձնաւորութեան մէջ. ամբողջ Աւետա-

րանը այս կերպով մի վսեմ անիմաստութիւն կ'գառնար։

Տարբեր իրանց ազդեցութեան շրջանով, իրանց գործ գրած զէնքերավը, եկեղեցին և քաղաքային հասարակութիւնը իրանց անխուսափելի յարաբերութիւնների մէջ՝ պէտք է առանձին խնամքով նախանձախնդիր լինին իրանց անկախութիւնը պահպանելու։ Արդ՝ այդ անկախութիւնը վտանգի մէջ կարող է գրուիլ երկու կերպով. աստուծածպետութեամբ, որ ենթարկում է պետութիւնը եկեղեցւոյն, և հակառակ տեսութիւններով, որոնք ենթարկում են եկեղեցին պետութեանը։ Մենք իսկոյն խօսեցանք աստուծածպետութեան մասին և ես ցոյց տուի թէ ինչպէս Յիսուս վերջնականապէս գտապարտել է այդ։ Այլ ևս այս կողմից չէ սպառնում այսօրուայ օրը վտանգը։ Կարող են փորձ փորձել տեսականապէս յարութիւն տալ այն բանին, ինչ որ միջին դարերը իրագործել են այնպիսի հոյակապ և աղետաբեր կերպով։ Բոլոր այս ջանքերը կ'ընդհարուին նոյն իսկ ժամանակակից հասարակութեանց ոգւոյն և նոցա վերջը մի ողորմելի անյաջողութիւն կը լինի։ Թող անցեալի ֆանա-

տիկոս երկրագուները մնան իրանց դառն
հեծութիւններով և անկար զարովթով. թող-
նենք որ մեռեալները թաղեն իրանց մեռել-
ներին: Այսօրուայ օրը մաքառումը սպասում
է մեզ մի տարբեր ուղղութեամբ: Պետութեան
մասին կայ մի գաղափար, որ սպառնում է
նոյն իսկ եկեղեցւոյ ամբողջութեան. այդ այն
գաղափարն է, որ միախառնում է եկեղեցին
քաղաքալին հասարակութեան հետ մինչև այն
աստիճան, որ կորցնում է առաջինը երկրորդի
մէջ և կրօնի վերայ նայում է իրբե քա-
ղաքալին մարմնի գործողութիւններից մէկի
վերայ *):

Ժամանակակից ռամկապետութեան ներ-

*) Այս անսութենութեան մի անուն ունի պատմութեան
մէջ. Երաստուածառնութեան, աստուածարան Երաստի անունով,
որ առաջնոր արամարանորէն լայատրեց այդ հայեացք-
ները. Սոյս regio, illius religio: Նոյն եզրակացութեան
կարելի է համեմել ենթագրելով որ եկեղեցւոյ գաղափարը
պէտք է անշնուանայ բրիտոննեաց դարձած քաղաքային հա-
սարակութեան գաղափարի մէջ, ինչպէս այդ երազիւ է
հուչակաւոր բողթը, ինչպէս այդ պնդում է այսօր մօ-
պատուալի բարեկամ գնասմինիսորը կարգերէց Ստենլին,
որի հայեացքները այս կէտի վրայ միանգամայն հակառակ
են Աը հայեացքներին:

Կայացացիչներից շատերի կարծիքով, կրօնա-
կան հասարակութեան վերայ պէտք է նայել
իրեւ ամէն մի ուրիշ հասարակութեան վե-
րայ: Այդ հասարակութիւնը այլ կանոն և այլ
կամք ունենալ չէ կարող, բայց թէ այն որ
թելադրում է նորան իւր անդամների մեծա-
մասնութիւնը: Այն փաստի վերայ հիմնուելով,
որ կրօնական զգացմունքը կարող է փոփո-
խուիլ, ինչպէս միւս բոլոր զգացմունքները և
որ դա ևս պէտք է ենթարկուի յառաջադիմու-
թեան օրէնքին, նոքա եզրակացնում են, թէ
քաղաքալին հասարակութիւնը կարող է ուղ-
ղել գորան այս կամ այն մտքով և այսպէս
հաշտեցնել գորան ներկայ ժամանակի նորանոր
պահանջների հետ: Ահա այս կարծեցեալ իրա-
ւունքից յառաջ եկաւ, անցեալ գարու վերջին,
կղերի քաղաքալին կազմակերպութիւնը, որ
այնպիսի մեծ վտանգի ենթարկեց ֆրանսիական
յեղափոխութեան գործը և այնպէս սաստիկ
երկպառակեց Ֆրանսիան. դժբախտաբար այս
փորձը պատշաճապէս չէ հասկացուել և մեր
օրերում նոյն ցնորքով մոլորուած մարդկի եմ
տեսնում, որոնք իրաւունք են համարում Եւ-
րապալի մէջ եկեղեցին և պետութիւնը միաց-



նող դաշնագիրներ յօրինել, որպէս զի արդարացնեն իրանց ձգտումը՝ կրօնական կեանքին վերաբերեալ օրէնքներ հրատարակելու և այնպիսի կրօնք ստեղծեն, որ լինէր դարուս ըղձանքների բարձրութեան վերայ. Այս պահանջին միայն երկու պատասխան կայ, պնդել նախ և առաջ, որ երբէք չ'պէտք է շփոթել քաղաքային հասարակութիւնը և կրօնական հասարակութիւնը. պնդել այնուհետեւ որ մի իսկական եկեղեցի, ալսինքն մի բուն քրիստոնեալ հասարակութիւն, երբէք թոյլ չի տալ, որ իւր գլխին այս տեսակ փորձեր անեն, որ հասարակութիւնը կազմող բոլոր անդամների համար քրիստոնէութիւնը աստուածեղէն յալտնութեան մի փաստ է, որ նա կախուած չէ մի մեծամասնութեան պատահարներից, որ չ'ստացած լինելով քաղաքային հասարակութիւնից ոչ իւր հեղինակութիւնը, ոչ իւր հաւատի օրէնքը, նա չէ կարող սոցա նորա իշխանութեանը ենթարկել. ամենայն եկեղեցի, որ չի իմանալ այս լեզուն բանեցնել և այս սկզբունքների համաձայն ընթանալ, ամենայն իրաւամբ դատապարտուած է կորչելու. Նա կարող է իւր վատահոգի զիջումների շնորհիւ, մի առ ժամանակ

ժողովրդականութիւն վայելել, նա կարող է կարծել որ վայելելով ամբոխների մոլեսքանչ հաւանութիւնը, մի ոյժ է գտել. բայց այս արագանցուկ ալիքը ալսօր կ'բարձրացնէ նորան, որպէս զի ձգէ վաղը անզօրութեան և արհամարհանքի անդունդը:

Ես փորձեցի, եղբարք իմ, ցոյց տալու ձեզ թէ Յիսուս-Քրիստոս ինչպէս է որոշել սկզբունքով պետութեան և եկեղեցւոյ փոխադարձ անկախութիւնը և ինչպէս պէտք է պահպանուի իւրաքանչիւրի անկախութիւնը նոցա բոլոր յարաբերութեանց մէջ: Տեսնենք այժմ խնդրի գործնական կողմը. այստեղ մենք շատ յաճախ կ'հանդիպենք ալդ երկու հասարակութեան շփոթմանը, որ Յիսուս-Քրիստոս ալնպէս որոշակի զատել է միմեանցից:

Այստեղ եկեղեցին հպատակեցրել են մի որ է քաղաքական կուսակցութեան շահերին. Նորան համարում են նախկին հասարակական կազմակերպութեան պատկ. եթէ մի հին հաստատութիւն ընկնում է, կարծում են որ կրօնը վտանգի մէջ է. կարծում են թէ գահը և սեղանը անքափելի կերպով կատուած են և որ մի ուամկապետական հասարակութիւն չէ

կարող քրիստոնեալ լինել։ Յօգուտ կառավարութեան այս կամ այն ինչ ձեփ մէջ են բերում հռչակաւոր վկայութիւններ, ուր առաքեալները պատուիրում են հնագանդութիւն իշխանութեան, առանց նկատելու որ այդ իշխանութիւնը պարզապէս այն քաղաքալին հասարակութիւնն է, որի տեսութիւնը բացատրում է սուրբ Պօղոսը և որ առաքեալները նոյն իսկ այս վկայութեանց մէջ են ձեակերպել այս հասարակութեան անկախութիւնը։ Միախառնելով եկեղեցին մի քաղաքական կառավարութեան ձեփ հետ, այս կառավարութեան դէմ ուղղուած ամէն մի հարուած համարում են իբրև ապստամբութիւն և հպարտութեան նըշան։ Դառնապէս ափսոսում են անցեալը առանց մտածելու, որ այդ անցեալը ունեցել է սակայն ամպարշութեան, ապստամբութեան և յանցանքների իւր ընդարձակ մասն ու բաժինը. բնազդմամբ գրաւում են իրանց գրօշակի պաշտպանութեան համար բոլոր յետաշըջական կուսակցութիւնները, նոցա մէջ բնական դաշնակիցներ տեսնելով։ Կուսակցութեան շահերը շուտով մի կողմ են թողնում կրօնական շահը. հոգիները գեալի Աստուած դարձնելը՝ զբաղման

մի երկրորդական առարկայ է դառնում. Էական կէտը՝ արդարարացի դատի բաղթութիւնն է և ով նպաստում է այդ դատին՝ ամենասիրելի ընդունելութիւնն է գտնում, ոչ ոքին փոլթչէ սորա անձնական հաւատը կամ բնաւորութիւնը նման այն քրիստոսազօր արքաներին, որոնք առանց խոճի մտաց դիմում էին տաճկի կամ հերետիկոսի օգնութեան, կրօնական դատի պաշտպանները ախօրուայ օրը լաճախ տարօրինակ գաշնակիցներ ունին, մարդուս սիրտը ցաւում է, երբ տեսնում է որ սուրբ խընդիրների պաշտպան հանդիսանում են պղծիչներ և երբ հանդիպում է նոյն աշխարհային թերթում, անառակութեամբ լի էջերին կից, Քրիստոսի և նորա Աւետարանի ջատագովութեան։ Տիսուր տեսարքն, որին ամեն օր տկանատես ենք։

Մի ծալրախեղութիւն առաջ է բերում մի ալլ ծալրախեղութիւն։ Նմ նկարագրածի հակառակ բանակում, ես տեսնում եմ որ յաճախ մի համանման շփոթութիւն է տիրապետում։ Այն ձիշդ սկզբունքը հիմք առնելով; որ Աւետարանը նպաստաւոր է ամեն ազատութեան, աշխատում են, որ մի բոլորսին տարբեր խնդիր

է, նորան համերաշխ անել այս ինչ լառաջարդէմ կուսակցութեան. ալսպէս մի երեսուն տարի սորանից առաջ, արդարացնում էին ընկերավարութիւնը (socialisme) լանուն Քրիստոսի լայտնի խօսքերի և առաջին քրիստոնեաների օրինակի Կարծում են, որ կառավարութեան այս ինչ ձեւը, օրինակ հասարակապետական ձեւը բողոքականութեան ոգւոյ բնական հետեանքն է: Պատմաբանօրէն ոչինչ բան այդքան անճիշտ չէ, և դիւրին կըլինէր ապացուցանել, որ անձնուիրութիւնը դէպի ժառանգական միապետութիւն ոչ մի տեղ գուցէ այսօրուայ օրը այնքան արմատացած չէ, որքան մի քանի բողոքական ազգերի մէջ: Այս ինչ ռամկապետութիւնը կարող է բռնակալական լինիլ, այն ինչ սակաւապետութիւնը (oligarchie) լարգել է տուել իւրաքանչիւրի իրաւունքներն և արտօնութիւնները և պատմութեան լայտնի օրերում ապաստարան է տուել բոլոր աշխարհների և ամեն կրօնի տարագրեալներին: Ուրեմն վերին աստիճանի վտանգաւոր է և անարդար նկեղեցին որ և է աստիճանով Հաղորդ անել կառավարութեան մի առանձին ձեւի. այս խնդրի մէջ միակ որոշ կէտն այն է,

որ ամենայն ինչ, որ բարձրացնում է մարդկային արժանաւորութիւնը, բարոյական ազատութիւնը, պէտք է համակրելի լինի քրիստոնէուկան եկեղեցւոյ համար, վասն զի քրիստոնէութիւնը ոիներիմ թշնամի է ամենայն ձնշման, գալ դա վերևից թէ ներքեցից:

Տեսականօրէն ընդունում են այս գաղափարը և մոռանում ամենայն օր մաքառման սաստկութեան մէջ: Ուրեմն թող ոչ ոք չ'զարմանայ որ մենք անկեղծութեամբ մատնանիշ ենք անում վտանգի վերայ: Ես կարծում եմ որ եկեղեցին պէտք է ամենայն ազատութեանց հովանաւորիչ լինի, և ես նոյնպէս հաստատ համոզուած եմ, որ նա երբէք չ'պէտք է ծառայէ մի քաղաքական կուսակցութեան շահերին: Արդ ամենայն եկեղեցի ունէ իւր պաշտօնական ներկայացուցիչները, այն ինչ որ սովորաբար կոչում են եկեղեցւոյ կղերը: Ես իմ կողմից հաւատում եմ պաշտօնէութեան աստուածալին հաստատութեանը. ուրիշները տեսնում են այդ բանի մէջ միմիայն մի անհրաժեշտ պաշտօն. սոցա համար, Վինէի խօսքի համաձայն, Աստուծոյ պաշտօնեայն լոկ մի պաշտօն վարող քրիստոնեալ է: Ես այս տեսա-

կէտերի մասին չեմ կամենում վիճել, ես միայն
հաստառում եմ այն լայտնի փասթը, որ կղե-
րը կամ պաշտօնէութիւնը, ինչ ձևով և հան-
գէս գալ նա, ունէ վտանգալից պատիւ ներ-
կալացնելու եկեղեցին հասարակական կարծիքի
առաջ: Եւ ահա, ես կարծում եմ որ նորա-
խկական հեղինակութիւնը աւելի մեծ, առա-
ւել ուժեղ կ'լինի եթէ նա համախոհ չ'գառ-
նայ ոչ մի կուսակցութեան, եթէ նա ստուեր
չ'ձգէ իւր վերայ որ և է քաղաքական գաշ-
նակցութեամբ և եթէ ձգաէ միայն լինելու
իրաւունքի, ազատութեան, հասարակական խա-
ղաղութեան ներկայացուցիչ և պաշտպան: Ա-
ռաջ, համարեա թէ բոլոր եւրոպական պե-
տութեանց կազմակերպութեանց մէջ, կղերը
իւր պաշտօնական տեղն ունէր ազգային ժո-
ղովներում: Այժմ այդ տեղը համարեա թէ աշ-
մենուրէք մերժում են նորան: Դորա վերայ ես
չեմ գանգատվում, ընդհակառակն ուրախանում
եմ և կ'ցանկալի, որ կղերը չ'մտնէր, ազգային
ընտրութեանց ճանապարհով այն ասպարէզը,
որ մեր օրէնսդիրները այնպիսի խոհեմութեամբ
կողպել են նորա առաջ: Հեռու ինձանից
զանալու քահանային իւր անձնական քաղա-

քական կարծիքները ունենալու իրաւունքը,
շիջուցանելու նորա մէջ հարենասսիրութեան
բոյը և դարձնելու նորան, ինչպէս խիստ ազ-
գու կերպով ասած են, քաղաքականութեան
մի ներքինի: Թող իրեւ քաղաքացի նա իւր
խղճմտանքի համաձայն մասնակցէ քուէտր-
կութեան և գործէ, բայց երբէք չ'վստահանալ
մի կուսակցութեան շահերին ծառայեցնել այն
բարոյական հեղինակութիւնը որ աւանդուած
է իրան. այդ կլինէր ամենահաստատ միջոց
այդ հեղինակութիւնը կործանելու:

Մի համեմատութիւն կ'աղարգէ իմ միտքը:
Ամենայն ժամանակակից ազգութեան մէջ եր-
կու հիմնական հաստատութիւն կալ. զօրք և
հասարակական գպրոց: Դոքա հանդէս են զա-
լիս իրեւ անհրաժեշտ հասարակական կարիք-
ներ: Սորդ ոչ մի խոհեմ մարդ չ'կալ, որ չ'հաս-
կանայ թէ ոչ մէկը ոչ էլ միւսը իւր դռները
չ'պէտք է բանայ քաղաքական վիճաբանու-
թեանց համար: Մի զօրք, որի առաջնորդները
արիբուններ դառնալին, կ'ենթարկէր երկերը
ամեն տեսակ արկածների, ոլժի ամեն տեսակ
հարուածների. դպրոցները, եթէ ուսուցիչները
մտցնէին նոցա մէջ այն բուռն խնդիրները

որ բաժանում են մեզ, գերդաստանի ազատութեան գէմ մի խսկական ոճիր կ'լինէին: Պահանջելով մեր զինուորներից և մեր դպրոցների ուսուցիչներից որ նոքա չ'միջամտեն քաղաքական վիճաբանութեանց, ոչ ոք խնդիրը այնպէս չէ հասկանում որ նոքա պէտք է հրաժարուին իրանց անկախութիւնից, հայրենասիրութիւնից, քաղաքացւոյ արժանաւորութիւնից: Արդեօք համրկ է ինձ ասել թէ եկեղեցին մի անհամեմատ աւելի բարձր շրջան է քան դպրոցը և զօրքը և որ խելագարութիւն է մտցնել եկեղեցւոյ մէջ կուսակցութիւնների կերքերը և ատելութիւնները:

Յաւիտենականութեան հանդէպ է կացուցանում մեզ Եկեղեցին. սա խնդիրների վերայ մի օրուայ և մի ժամի տեսակէտից չ'է նալում, այլ տիրապետում է ժամանակի և մեր բոլոր անցաւոր պայքարների վերայ: Որքան երկրաւոր կեանքը առաւել կլանում է մարդոց, (և երբ է եղել այդ աւելի քան այժմ), այնքան աւելի կարեւոր է, որ մենք ամրացնենք այն կեանքից բարձր այն անտեսանելի իրականութիւնները, որոնք երբէք չ'են անցնում:

Բացարձակը (absolu), որ յաւիտենականի մի այլ կողմն է, ահա այդ պէտք է հռչակէ Եկեղեցին. սա նայում է խնդիրների վերայ իրանց անմիջական յարաբերութեանց նկատմամբ դէպի Աստուած: Քաղաքականութեան շրջանը, ընդհակառակ՝ վերաբերականն է, շատ անգամ նոյն իսկ վերաբերականից էլ պակաս է. քաղաքականութիւնը վեր է առնում մարդկանց այնպէս ինչպէս նոքա են, և հանգամանքները այնպէս ինչպէս գտնում է նոցա, նա մշտենջանաւոր զիջումներով է ապրում, նա գաշնակցութիւններ է կազմում, որոնց միակ հիմքը մի ընդհանուր շահ է և որոնց մէջ գաշնագիրների բարոյականութիւնը մի երկրորդ կարգի խնդիր է: Մաքառումը սկսվում է, հետզհետէ սաստկանում է, պէտք է յուղել ամբոխները, առանց ժողովրդի կրքերի վերայ ազգելու գործը առաջ չի գնալ: Երեւակայեցէք կրօնը կուսակցութեանց ալս դաշնաւորութեան մէջ խառնուած, ալսաել յարձակմունքներ կրելով, այնտեղ պաշտպանութիւն գտնելով այն մարդկանց մօտ, որոնք կրօնը մի խրտուիլակ են դարձնում, կամ մի կառավարութեան դրօշակ: Աւաղ. դուք յա-

ճախ տեսել էք այդ և պատմութիւնը նոյն իսկ ամենակորեցին ցոյց է տալիս, որ այս վաղանցուկ ուժը, որ կուսակցութիւնները տալիս են կրօնին, տոկոսիքով տուժում է Եկեղեցին իւր իսկական հեղինակութեան գոհաբերութեամբ:

Բայց մեզ կ'ասեն, քաղաքականութեան մէջ բարոյական խնդիրներ կան, որոնց կրօնը չէ կարող օտար մնալ: Ո՞վ է հերքում այդք: Ի հարկէ ոչ մենք: Մենք իսկոյն լիշեցնում էինք այդք: Արեգակի լուսոյ պէս պարզ է, որ քաղաքականութիւնը շոշափում է բարոյականութիւնը և շոշափելով նորան շատ անգամ սաստիկ վերքեր է հասցնում: Կուսակցութեան ոգւոյն յատուկ է թմբքեցնել խղճմտանքները: Հարցնողներ են եղել թէ որքան խելօք մարդիկ պէտք են որպէս զի նոցանից մի անմիտ ամբոխ կազմուի, կարելի է հարցանել, թէ որքան ազնիւ մարդիկ պէտք են, որպէս զի նոցանից անխիղճ մի դաշնակցութիւն կազմուի: Այս ինչ մարդը, որ անձնապէս անընդունակ կը լինէր դրժել մի խոստման, դիմել զրպարտութիւնների կամ սպառնալիքի, առանց խղճահարուելու ծափահարում է նոյնչափ ա-

տելի գործողութեանց, երբ սոքա հաւանական են և ծառայում են իւր դատին: Նատ անձանց համար խնդիրն այն չէ թէ օրէնքը ոտնակոխ է եղած, այլ թէ ով է եղել դրժողը և ինչ նպատակով: Սա այն յաւիտենական առածն է թէ միջոցները արդարացնում են նըպատակը, որ լոկ մի յայտնի ընկերութեան սկզբունք չէ, այլ պատկանում է բոլոր կուսակցութեանց, որոնք կուրացած են կրքով: Ես չ'եմ պահանջում որ կրօնը լուռ մնայ քաղաքականութեան անբարոյական գործողութիւնների առաջ. ընդհակառակը: Ես կամենում եմ, որ այդ տեսակ գործողութիւնները աւելի մեծ ուժով լոյս աշխարհ հանելու համար, կրօնը չ'իջնէ քաղաքականութեան ասպարէզը, որովհետեւ եթէ կասկած լինի որ նա խօսում է, ոչ յանուն խղճմտանքի, այլ մի որ և է կուսակցութեան, նա միայն մի աւելորդ ձախն կ'գառնալ մեր մաքառումների անսերդաշնակ սղմուկի մէջ: Վեր առնենք մի երևելի օրինակ, որին միշտ պէտք է դիմել: Զկալ մեր մէջ մէկը, որ հիացած չ'լինի Յովհաննէս Մկրտչի վարմունքի վերայ Հերովդէսի պալատում և այն անլողդողդ արիութեան վե-

րայ, որով նա ասաց յանցաւոր արքային. «Ներելի չէ քեզ անել այն, ինչ որ անում ես» Բայց թող Յովհաննէս Մկրտիչը, փոխանակ խղճմտանքի մարգարէ լինելու, մի ժողովրդական տրիբուն լինէր և նորա բոլոր հեղինակութիւնը կ'տապալուէր որովհետև այդ ազգարարութեան ներքոյ դուք կ'նկատէիք մի քաղաքական նպատակ և մի կուսակցութեան յաղթութիւն։ Եւ արդ, ես չ'եմ դադարիլ ասելու նոցա, որոնք Եկեղեցին ներկայացնելու պատիւ և արտօնութիւն ունին. «Երբէք մի խառնէք դորան այն մաքառումների մէջ, որոնց նա օտար պէտք է մնալ: Նորա մեծութիւնն և ոյժը այն է, որ նա յաւիտենական իրաւունքի և արդարութեան ձայնն է:»

Ժամանակ է մեր խօսքը վերջացնելու։ Եթէ մենք հաւատարմութեամբ թարգմանեցինք Յիսուս-Քրիստոսի միտքը, ձեզ համար դժուար չի լինիլ որոշել այն պարտաւորութիւնները, որոնք ծագում են դորանից։

Մի շփոթէք այն, կասեմ ձեզ, ինչ որ Քրիստոս անջատել է։ Բայց այն երկու շրջանների մէջ որ ներկայացնում է ձեզ, արէք այն


ինչ որ պէտք է անել։ Տուեցէք Կեսարին այն, ինչ որ Կեսարինն է և Աստուծոյն ինչ որ Աստուծունն է։

Կեսարը քաղաքային հասարակութեան անձնաւորումն է. Կեսարը այլ ևս, ինչպէս Յիսուսի ժամանակ, այն օտար և բռնակալական իշխանութիւնը չէ, որ նեղում էր Հրեաներին. ընդհակառակը դա է և աւելի ու աւելի պէտք է լինի Պետութիւն՝ որ խոստովանում է և հովանաւորում է ամէն մէկի իրաւունքները, ազգ՝ որ ինքն իրեն կառավարում է, հասարակութիւն՝ որ յարգում է խղճմտանքը և որ պահանջում է անհատից միայն այն, ինչ որ պէտք է տայ անդամը մարմնոյն, օրինակ՝ արեան կամ գրամի հարկը, օրինաց հնագանդութիւն, իւր ժամանակի և ոյժերի նուիրումն հասարակական օգտին։ Որոշել ճշդութեամբ այն, ինչ որ պատկանում է Կեսարին, ժամանակակից ոգտոյ ամենադժուար և ամենակարեոր խնդիրն է. երբեմն Կեսարի մասը ահագին էր, Կեսարը ամենամեծ սեփականատէր էր, բացարձակ իշխող, նորանից էր ամէն ինչ սկիզբն առնում։ Յառաջադիմութեան հետ միասին նորա իրաւունքների

շրջանը սեղմուել է, անհատինը մեծացել: Պետառթիւնը աւելի և աւելի ձգտում է հասարակութիւնը դառնալ: Արդ, այս հասարակութեանը դուք պէտք է մատուցանէք ձեր մըտաւոր, ազնիւ և անձնուէր աջակցութիւնը: Նատ անգամ կարծել են, որ քրիստոնեայն պէտք է հեռու պահէ իրան մարդկալին իրերից և հասարակական շահերից. եղել են այնպիսի ժամանակամիջոցներ, ուր հասարակութեան ապականութիւնը այն աստիճան մեծ էր, որ բարեպաշտ հոգիք այլ երազ չեն ունեցել քան երկինքը. բայց այս ճգնաւորութիւնը հաճելի չէ Աստուծոյն. դա պատճը է նոյն իսկ իւր էութեան մէջ և մի երևակալական կատարելութիւն: Մարդ լինելով, մենք պէտք է նուիրենք մեզ մարդկութեան. բոլոր ազնիւ, ընտիր, ազատամիտ դատերի փաստաբան պէտք է լինինք, յառաջադիմութիւնը այս բոլոր ձեւերով պէտք է թանգ լինի մեզ համար, և ատարօինակ քան կլինէր եթէ մենք, սպասելով որ ճշմարտութիւնը և արդարութիւնը մի օր հրաշալի կերպով ծաղկէին, անտարբեր մնալինք դոցա յաղթութեանց այս աշխարհում:

Բայց տալով Կեսարին ինչ որ Կեսարինն է, տուէք Աստուծոյն, ինչ որ Աստուծունն է. արդ Աստուծոյն պատկանածը ձեր ամբողջ հոգին է: Այդ հոգին նորա համար է ստեղծուած: Քրիստոս աստմ էր Հրէաներին. «ցուցէք ինձ զգահեկան հարկին.» մենք կարող ենք նոյնպէս ամել «Ցոյց տուէք ինձ մի մարդու հոգի, մենք նորա վերալ ցոյց կտանք Աստուծոյ պատկերը»: Մի պատկեր, որ յաճախ գունատ է, աղօտ, համարեա թէ ջնջուած աշխարհի և մեղքի ազդեցութեան ներքոյ: Նայեցէք սակայն. Աստուածալին ծագման նշանները կարող էք զանազանել նորա վերալ և սուրբ Պօղոս կարող է լիշեցնել կոտապաշտ Աթէնացոց որ նոքա Աստուծոյն պատկանեալ ցեղից են: Տուէք Աստուծոյն ինչ որ Աստուծունն է. մատուցէք նորան այն ոդին, որ այնքան յաճախ խոնարհուել է մտաւոր կուռքերի առաջ, այն կտամքը, որ երկար ծառայել է լոկ ձեր սեփհական բաղդին, այն սիրտը, որի վերալ իշխել է լոկ արարածը և որ գուցէ պղծուած է եղել անարժան կրքերով: Թող Աստուած ձեր ամենօրեալ գործունէութեան նպատակը լինի. մատուցէք նորան

այն «մտալին ծառալութիւնը», որի մասին
խօսում է առաքեալը և որ ամենաազնիւ վաս-
տակն է, որին դուք ընդունակ էք. մօտե-
նում է այն օրը, երբ յաւիտենական հայրենի-
քի մէջ նա կլինի ձեզ համար միակ և իսկա-
կան արքայն և ուր ձեր վեհագոյն երջան-
կութիւնը կ'լինի տալ Աստուծոյն ինչ որ Աս-
տուծունն է:



3174

In. 304.

ՀՀ Ազգային գրադարան



NL0029788

3080